

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԿԱՐԾԻՔ

Չարենցավան համայնքի ավագանու քննարկմանը ներկայացված N 60-Ն որոշման նախագծով նախատեսվում է համայնքի 2023թ-ի բյուջեում կատարել փոփոխություններ մասնավորապես՝

Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար, բյուջեի վարչական մասի եկամուտն ավելացնել 7000.0հ. դրամով, 70500.0հ. դրամի փոխարեն սահմանելով 77500.0հ. դրամ:

Ըստ համայնքի բյուջեի եկամուտների կատարողականի, սույն հոդվածով պլանը կազմել է 70000.0հ.դրամ, իսկ փաստացի մուտքերը առ 26.06.2023թ-ի դրությամբ կազմել է ընդամենը 14791.0հ.դրամ, այսպիսի թերակատարման պայմաններում ավելացնել սույն եկամատատեսակը հիմնավորված չէ:

01.12.2022թ-ից առ 23.06.2023 թ.-ն համայնքապետի համապատասխան որոշումներով օրինականացվել է թվով 93 միավոր ավտոտնակ, առևտրի սրահ և շինություններ միայն Չարենցավան քաղաքի վարչական տարածքում:

Համաձայն <<վարչական իրավախախտումներ վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսվում է տուգանքներ՝

Հոդված 48. Պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելը և դրա հետևանքները չվերացնելը

Պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելը և դրա հետևանքները չվերացնելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Գյուղական համայնքներում պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելը և դրա հետևանքները չվերացնելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Սույն հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված արարքներ կատարել շարունակելը սույն հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված կարգով տուգանք նշանակելուց հետո՝

- առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

Համայնքի 2023 թ.-ի բյուջեով նախատեսվել և հաստատվել է մուտքեր տույժերից և տուգանքներից՝ ընդամենը 1000.0հ.դրամ:

Ըստ համացանցում տեղադրված համայնքի բյուջեի կատարողականների վարչական իրավախախտումների կիրառման հետևանքով համայնքի բյուջեի մուտքեր 2019-2022թթ. ունի հետևյալ տեսքը՝

1. 2019թ.-ի պլանը-1000.հ.դրամ փաստացին կազմել է-471.2 հ.դրամ /-528.8/
2. 2020թ.-ի պլանը-1000.0հ.դրամ փաստացին կազմել է-678.0հ.դրամ /-322.0/
3. 2021թ.-ի պլանը-1000.0 հ.դրամ փաստացին կազմել է-2045.0հ.դրամ//+1045.0/
4. 2022թ.-ի պլանը-1000.0 հ.դրամ փաստացին կազմել է- 645.0 հ.դրամ /-355.0/

Առաջարկվում է մուտքերը տույժերի և տուգանքներից եկամուտն ավելացնել 7000.0հ. դրամով:

Համայնքի ղեկավարի 25.11.2022թ.-ի թիվ 247 կարգադրությունով հանձնարարվել է կատարել համայնքի սեփական գույքի գույքագրում, որը պետք է սկսվեր նոյեմբերի 25-ին և ավարտվեր դեկտեմբերի 26-ին, արդյունքները ամփոփվեին մինչև դեկտեմբերի 30-ին՝ գույքագրումը պետք է

հրականացվեր համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2016թ.-ի հունվարի 08-ի <<Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը և ժամկետները սահմանելու մասին>> թիվ 2-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Ըստ տարեվերջյան գույքագրման ցուցակներ գույքագրում չի կրել համատարած բնույթ, չեն գույքագրվել պարտավորություններ, ոչ ֆինանսական ակտիվներ և համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերում կառուցված ինքնակամ շինություններ :

Ելնելով վերը նշված փաստերից նախագիծը այս տեսքով ենթակա է մերժման:

<<ԲԴ>> ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

Ա.ԳԱԼՍՅԱՆ